# Արձանագրություն N 2

## «ՀԵՐ-ՀԵՐ» ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀԷԿ- ԷԱՃԾՁԲ -22/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի (ԷԱՃ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16-ը մարտի 2022թ.

Ընդունել ի գիտություն, որ Eauction համակարգի կողմից հայտերի բացումն իրականացվել է 15.03.2022թ., ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդը սկսվել է 16.03.2022թ.: Աճուրդի ամփոփման արդյունքները ներառված են սույն արձանագրության մեջ

Մասնակցում էին՝

**Գնահատող հանձնաժողովի նախագահ՝**

- Գևորգ Շադյան

**Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ**

- Քրիստինա Թարխանյան
- Մյասնիկ Հակոբյան

**Քարտուղար՝** Մերի Մկրտչյան

**«ՀԷԿ- ԷԱՃԾՁԲ -22/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Մ. Մկրտչյան)

1. Տեղեկություններ «ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային գնումների Eauction (www.eauction.armeps.am) կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
3. «ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
4. «ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. 1. Տեղեկություններ «ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային գնումների Eauction (www.eauction.armeps.am) կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Մ. Մկրտչյան)

1.1 Ըստ www.eauction.armeps.am կայքի տվյալների՝ «ՀԵՐ-ՀԵՐ» ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ-ի կարիքների համար «ուղղորդափոխադրող ավտոմեքենաների վարձակալություն՝ վարորդի հետ միասին» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1. | ՖԱ Նարեկ Վարդանյան Գրավիկի |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

(Մ. Մկրտչյան)

2.1 «ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում **Eauction** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացվել է մասնակցի նախնական և վերջնական գնային առաջարկը. ***Տես Հավելված N 1:***

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | 1 | Նարեկ Վարդանյան Գրավիկի | 1200000 AMD | 1200000 AMD | 0% | 1200000 AMD | 1200000 AMD | 0% | 1200000 AMD | |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**3. «ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ իրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Մ. Մկրտչյան)

3.1 **Eauction** համակարգի կողմից չմերժված ՖԱ Նարեկ Վարդանյան Գրավիկի էլեկտրոնային հայտերում իրավերով պահանջվող (նախատեսված) **դիմում-հայտարարություններն** առկա են:

3.2 Գնահատող հանձնաժողովի կողմից 17.03.2022թ. ուսումնասիրվել են «ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ֆիզիկական անձ Նարեկ Վարդանյան Գրավիկի կողմից ներկայացված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարություն (Հավելված 1) և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես, ներկայացված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարություն (Հավելված 1) ավտոմատ կերպով լրացված չէ համակարգի միջոցով և նշված հավելվածում բացակայում է հետևյալ տեքստը՝ «Սույնով Նարեկ Վարդանյան Գրավիկի հավաստում է, որ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում պարտավորվում է, ընթացակարգի իրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում»: Անհրաժեշտ է Ձեր կողմից ներկայացված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարություն (Հավելված 1) շտկել և ներկայացնել համապատասխան ձևաչափով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը համակարգի միջոցով շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

**21.03.2022թ., ժամը 10:00-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ ՖԱ Նարեկ Վարդանյան Գրավիկի , կողմից սահմանված ժամկետում և կարգով **Eauction** համակարգի միջոցով շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները և վերջինիս հայտը գնահատող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից գնահատվեց բավարար՝ իրավերի պահանջներին համապատասխան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**4.«ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Մ. Մկրտչյան)

4.1 Հիմք ընդունելով **Eauction** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացված նախնական և վերջնական գնային առաջարկները, ինչպես նաև համակարգի կողմից չմերժված մասնակիցների կողմից ներկայացված դիմում-հայտարարությունների գնահատման արդյունքները՝ .**«ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ հաղթող մասնակից է ճանաչվել՝ ՖԱ Նարեկ Վարդանյան Գրավիկի և վերջինիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 «ՀԵՐ-ՀԵՐ» ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված **«ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2»** ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ չի կիրառվում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**5.Տեղեկություններ իրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.**

(Մ. Մկրտչյան)

5.1 **«ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

**6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Մ. Մկրտչյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Մ. Մկրտչյան)

7.1 .**«ՀԷԿ-ԷԱՃԾՁԲ-22/2»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ն, ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ., շ.47, բն.17 հասցեում՝ «Հեր-Հեր» Հիդրոէլեկտրակայան» ՓԲԸ-ի նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող(ԳԱՊ)** | Գ. Շառյան |
| **Գնահատող** | Ք.Թարխանյան |
| **Գնահատող** | Մ. Հակոբյան |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | Մ. Մկրտչյան |